

## ԱՐԱՅԻԿ ՄԵԽԹԱՐՅԱՆ

Ծնվել է 1960թ. մայիսի 8-ին:

1967-1977թթ. սովորել է Ռաֆֆու անվան թիվ 36 միջնակարգ դպրոցում:

1979-1985թթ. ընդունվել և ավարտել է Մոսկվայի սննդի արդյունաբերության համամիութենական ինստիտուտը՝ ինժեներ-տեխնոլոգի մասնագիտությամբ:

2003թ. ՌԴ-ի Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման ակադեմիայում անցել է դասընթաց՝ չափումների միասնականության ապահովումը չափագիտության ապահովման ոլորտում:

1985-1997թթ. աշխատել է «Քար և սիլիկատներ» գիտահետազոտական ինստիտուտում որպես պլանբաժնի ինժեներ, այնուհետև՝ բաժնի վարիչի տեղակալ, լաբորատորիայի վարիչ, փոխտնօրեն ֆինանսական գծով:

1997-2005թթ.՝ Հայաստանի Հանրապետության ստանդարտացման չափագիտության և սերտիֆիկացման վարչություն: Էկոնոմիկայի նախարարություն, «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում որպես տարածքային բաժինները համակարգող վարչության պետ:

1999թ. ընտրվել է Արաբկիր համայնքի ավագանու անդամ, 2009թ. մայիսի 31-ին՝ Երևանի ավագանու անդամ:

2009թ. պարգևատրվել է «Արաբկիր համայնքի պատվավոր քաղաքացի» հուշամեդալով:

Ամուսնացած է, ունի մեկ որդի և մեկ դուստր:

